# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 101

«11» 11 2022 թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 33 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 1-ին ու 3-րդ մասերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**Հ ր ա մ ա յ ում ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 12.04.2018 թվականի «Ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 88 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 33 հրամանի «III. Զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների պահպանության հաշվառման կարգի, պակասորդի ու փչացման նկատմամբ հսկողությունը» բաժնի 26-րդ և 27-րդ կետերում «եռամսյակ» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «կիսամսյակ» բառով և դրա հոլովաձևերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին ու դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին

և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

**Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**